



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ.
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«09» 04 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000034

Ձեռնարկողը՝

«Լույսեր» ՓԲԸ

Ք. Երևան, Լենինգրադյան 31, բն.12

Գործունեությունը՝

Մալաթիա Սեբաստիա վարչական շրջանի Լենինգրադյան
փողոցի 23/7 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի
համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա
ազդեցության նախնական գնահատման հայք
ք. Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱՀ-ի
տնօրենի պաշտոնակատար՝

Ա. Ղոնոյան



**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

թիվ ԲՓ 000034

<<09>> 04 2020թ.

**Երևան քաղաքի Մալաթիա Սեբաստիա վարչական շրջանի
Լենինգրադյան փողոցի 23/7 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի
համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ**

Ներածական մաս

Ձեռնարկող՝ «Լոյսեր» ՓԲԸ

Ներկայացված նյութեր՝ Նախնական գնահատման հայտ
Գ կատեգորիա

Տեղադրման վայրը՝ Երևան համայնք, Մալաթիա-Սեբաստիա վարչական
շրջան

Նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախագիծը՝ «Լոյսեր» ՓԲԸ-ի կողմից, նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Լենինգրադյան փողոցի 23/7 հասցեում:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը կառուցվելու է անշարժ գույքի սեփականության իրավունք ունեցող՝ 12200մ² ընդհանուր մակերեսով հողամասում, Երևանի քաղաքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջարանքի հիման վրա:

Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնականը՝ խառը կառուցապատման:

Գործունեության նպատակն է կառուցել ժամանակակից լուծումներով բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր:

Նկարագրական մաս.

Համաձայն նախնական գնահատման հայտի բնակելի համալիրը կառուցվելու է «Նոյ» բնակելի թաղամասի հարավ-արևնեյսան հատվածում՝ բաց ազատ տարածքում: Կառուցապատման ենթակա տարածքի մերձակայքում են գտնվում մասնակի և «Նոյ» թաղամասի նոր կառուցվող բազնահարկ շենքերը:

Ըստ ինժեներա-երկրաբանական ուսումնասիրության տվյալների՝ բազմաթիվ ֆիզիկաերկրաբանական կառուցվածքի վերին շերտերին բնորոշ են բարձրացած աղբապահագալտային, բաց մոխրագույն, թույլ ճեղքավորված իրաբիսանի պահապանակը: Տարածքում բացակայում են կարստը, սողանքը, քարաթափությունը և հիմունքը: Այլ վտանգավոր երևույթները՝ Մինչև 30.0 մետր խորությունը ստորգետնությունը չեն հայտնաբերվել:



Համաձայն հայտի տարածքում բացակայում է բուսահողը և ծառաթփային բուսականությունը: Հողի վերին շերտում առկա է խճա-մանրախճային կազմի, հազվադեպ մեծաբեկորներով, կավային և ավազային նյութի խառնուրդով լիցքային գրունտ՝ լցված շինարարական, տեղ-տեղ կենցաղային թափոններով:

Համաձայն գնահատման հայտի գործունեության ենթակա տարածքում բնության և պատմամշակութային հիութարձաններ չկան: Գործունեության ենթակա տարածքը Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում գտնվող «Դալմայի այգիներից» գտնվում է 25-30մ հեռավորության վրա:

Շինարարական աշխատանքները տևելու են 36 ամիս, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ՝ էքսկավատոր, աշտարակային վերամբարձ կոռոնկ, շարժական կոմպրեսոր, էլեկտրական թրթոհի, ավտոբետոնախառնիչ, տոփանիչ, ավտոինքնաթափի, եռակցման սարք և այլն: Շինարարությունը կատարվելու է կապալային եղանակով՝ համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների կողմից: Նախատեսվող գործունեության շինարարական աշխատանքների կատարման ժամանակ օգտագործվելու են շինանյութեր՝ բետոն, ցեմենտ, ամրան, մետաղական կոնստրուկցիաներ, երեսապատման սալիկներ, հարդարման նյութեր, ապակի և այլն: Շինարարության համար անհրաժեշտ շաղախը և բետոնը բերվելու են Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով՝ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով:

Արտադրական հրապարակի մակերեսը կազմելու է 500մ², որտեղ պահեստավորվելու են շինարարության համար անհրաժեշտ նյութերը, կայանվելու է շինարարության համար նախատեսվող հիմնական շինտեխնիկան և այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում հանվելու է 22000 մ³ ծավալով հողային զանգված, որից 6600մ³-ը ժամանակավոր կուտակվելու և պահվելու է շինհրապարակում հետիցքի համար օգտագործելու նպատակով: Իսկ մնացած 15400մ³-ը տեղափոխվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր: Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու են թափոններ՝ կենցաղային(13650կգ) և շինարարական աղբի(480մ³) տեսքով: Շինարարության ընթացքում առաջացած շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, իսկ կենցաղային աղբը տեղափոխվելու է Երևան քաղաքը սպասարկող աղբահավաք ծառայության կողմից: Շահագործման փուլում կենցաղային աղբի հավաքման համար հատկացվելու է տարածք՝ շենքերի նկուղային հարկերում, որտեղից աղբը տեղափոխվելու է աղբահավաք ծառայության կողմից:

Շինարարության ընթացքում բնակեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների, հողի(գրունտի) ջրանի, շինանձնակազմի խմելու և կենցաղային կարիքների համար: Ջրանի ծավալները հաշվարկվում են այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար: Անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերն ուղղորդվելու են շինարարական հրապարակին կից պարզաբան (25մ³), որտեղ կատարվելու է մեխանիկական նստեցում: Շինարարության փուլում տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագործություններով: Աշխատողների համար խմելու ջուրը մատակարարվելու է տարածերով, իսկ պարմունակ կենցաղային կարիքների համար տեղադրվելու են բիոզուֆարաններ: Շինարարության փուլում ընդհանուր ջրօգտագործումը կազմելու է 2806 մ³/շին.ժամ: Շինարարական աշխատանքների ընթացքում ներգրավվելու են 20 մարդ:

Նախատեսվող բազմաֆունկցիոնալ համալիրը լինելու է ժամանակահանդիպություններով և շրջակա միջավայրի կառույցներին ներդաշնակ շինություն՝ ապահովագույն և ճակատային



մակերեսներով կանաչապատ շենք-այգի: Այն չի խոչնդուտելու բնակչության վիզուալ տեսադաշտը:

Կառուցապատման մակերեսը կազմելու է $7320\text{m}^2(60\%)$: Համալիրը բաղկացած է լինելու 4 բնակելի շենքերից, որոնք լինելու են ուղղանկյունաձև՝ $27,6\text{m} \times 21,6\text{m}$ առանցքային չափերի: Կառուցն ունենալու է 16 հարկ՝ $57,0$ մ առավելագույն բարձրությամբ: Շենքերից երկուսն ունենալու են 17 բնակելի, 1 հասարակական և 3 ստորգետնյա հարկեր՝ ավտոկայանատեղ: Մյուս 2 շենքերն ունենալու են 15 բնակելի, 1 հասարակական և 3 ստորգետնյա հարկեր: Յուրաքանչյուր շենքի բնակելի հատվածն (550m^2) ունենալու է 7 բնակարան: Հասարակական հատվածի ընդհանուր մակերեսը կազմելու է 501m^2 , ավտոկայանատեղի ընդհանուր մակերեսը՝ 18000m^2 : Շենքերի տանիքները լինելու են հարթ, իսկ ճակատները երեսապատվելու են տրավերտինե և բազալտե սալերով: Նախատեսվում են նաև ճանապարհների, մայթերի, հենապատերի, բաց ջրավազանի, հարթակների կառուցում, ինչպես նաև սիզամարգեր:

Բնակելի համալիրն ապահովված է լինելու սառը ջրամատակարարման, կենցաղային կոյուղու, ներքին հակահրդեհային համակարգերով: Շահագործման փուլում բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է «Վեռլիա Ջուր» ընկերության հետ նախօրոք կնքված պայմանագրի հիման վրա՝ ըստ տեխնիկական պայմանի: Ջրամատակարարումը կատարվելու է Լենինգրադյան փողոցից դեպի Նոյ թաղամաս գնացող ճանապարհին զուգահեռ անցնող անցնող $D=600\text{m}$ ջրատարից, իսկ կոյուղագիծը միացվելու է Լենինգրադյան փողոցից դեպի Նոյ թաղամաս գնացող ճանապարհին զուգահեռ անցնող $D=1000\text{m}$ տրամագծով կոյուղատարին:

Բնակելի համալիրի գազամատակարարումը և Էլեկտրամատակարարումն իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի:

Բնակելի համալիրի ջերմամատակարարումն իրականացվելու է անհատական ջեռուցման կաթսաներով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կառուցապատումից ազատ տարածքի և հարակից տարածքների բարեկարգում և կանաչապատում: Տարածքի բարեկարգման համար նախատեսվում են՝ կանաչ գոտիներ, ջրավազաններ, խաղահրապարակներ և տարբեր տեսակի ժամանցային գոտիներ, որոնց հիմնական հատվածը գտնվելու է ավտոկայանատեղների տանիքների վրա:

Կանաչապատման ընհանուր մակերեսը կազմելու է $4880\text{m}^2(40\%)$: Կանաչապատումն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված կանաչապատման նախագծին համապատասխան: Համաձայն կանաչապատման նախագծի (դենդրոնախագիծ) տարածքում տնկվելու են՝ 48 հատ սովորական եղևնի, 3 հատ հուղայածո, 91 հատ գնդածն սամշիտ, 7 հատ թույա այունածն, 22 հատ դրախտածո, 16 հատ գնդածն ակացիա, 7 հատ ծիակասկ, 11 հատ կաղնի, 33 հատ սիրիական վարդ, 18 հատ ասպիրակ, ընդամենը 256 ծառ և թուփ:

Կանաչապատման համար անհրաժեշտ բուսահողի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումն իրականացվելու է $\angle\text{-ում}$ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:

Կանաչապատ տարածքների ոռոգման համար ջուրը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով: Ոռոգումը կատարվելու է գոյություն ունեցող ռետինե խողովակների օգնությամբ: Ոռոգման ջրապահանջը կազմելու է $110\text{m}^3/\text{տարի}$.

Նախատեսվող գործունեության կատարման ժամանակ լինելու են շրջակա միջավայրի վրա ազդեցություններ, որոնք հիմնականում կապված են լինելու քանդակա, փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, հողային գանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական 

շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում.

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ջրանի կատարում,
 - սրուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրության թաղանթով,
 - սրուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում փակ ծածկով մեքենաներով,
 - շինարարական նյութերի տեղադրում բետոնապատ մակերեսի վրա,
 - շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերի ծածկում՝ աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով,
 - շինհրապարակում թափոնների տարանջատում, աղբամանների տեղադրում,
 - շինարարական տեխնիկայի լիցքավորում և յուղում շինհրապարակից դուրս՝ լցակայաններում կամ սպասարկման կետերում,
 - հեղուկ նյութերի պահում հատուկ տակդիրների վրա, հնարավոր արտահոսքերը կանխելու նպատակով,
 - մթնոլորտային օդ արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ անգամ,
 - օգտագործված մեքենայական յուղերով ու քայլուղերով հողերի հնարավոր աղտոտումից պահպանելու նպատակով հողերի մշտադիտարկում՝ երեք ամիսը մեկ անգամ,
 - շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների պահպանում և այլն:

Բնապահանական միջոցառումների համար նախատեսվելու է տարեկան մասհանել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում՝ 1050000 հազ. դրամ:

Պատճառաբանական մաս. համաձայն նախնական հայտի բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը կառուցվելու և շահագործվելու է <<-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան։ Այն ներդաշնակ է լինելու շրջակա կառույցներին և չի խոչնդութելու շրջակա բնակչության վիզուալ տեսադաշտը։

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կրելու են ժամանակավոր բնույթ՝ պայմանավորված շինարարության փուլով։ Դիտողությունների և առաջարկությունների հիման վրա հայտը լրամշակվել է։ Փորձաքննական գործընթացին ներգրավվել են կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, Քաղաքաշինության կոմիտեն։ Համաձայն կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից տրված կարծիքի՝ նախատեսվող գործունեության տարածքը չի համընկնում է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում գտնվող և 2019թ. պատմամշակութային հուշարձանի հանրապետական նշանակության կարգավիճակ ստացած «ՀԱՐՄԱՆԻ այգիներ»-ի տարածքի հետ։

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքի Մալաթիա Սեպաստիա, Լենինգրադյան թիվ 31/30 հասցեում իրականացվել են հանրահռ ընտրուսներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախարարություն գործություններում:



Փորձաքննական պահանջներ

1. Ծինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանն ուղղված:
 2. Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին, հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղյուկի մակարդակը և ճանապարհների բեռնվածությունը:
 3. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը:
 4. Անհրաժեշտ է ապահովել հայտով ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և պահպանումը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՍԱՄ

«Լույսեր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Լենինգրադյան փողոցի 23/7 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ

թ. Նորիջանյան

